«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագիր

- Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական ներդրումային բանկը ստորագրել են Հարևանության ներդրումային հարթակի դրամաշնորհային համաձայնագիր՝ Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Համաձայնագիրը թույլ կտա Եվրոպական հանձնաժողովին ֆինանսավորել նշված ծրագիրը մինչև 4,25 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհի չափով:
- Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել տարածաշրջանային փոխհաղորդակցությունը Հայաստանի տրանսպորտային ցանցի կատարելագործման, մասնավորապես՝ ճանապարհային անվտանգության հետ կապված միջոցառումների ներդրմամբ և համապատասխան մարմինների ու շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացմանն աջակցելու միջոցով՝ ճանապարհային անվտանգությանն առնչվող միջազգային չափանիշներին հասնելու համար:
- Ծրագիրը ներառում է հետևյալ գործողությունները՝ ճանապարհային անվտանգության միջոցառումներ Մ-6 միջպետական ճանապարհի վրա, ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում Հ-8 հանրապետական ճանապարհի և Մ-5 միջպետական ճանապարհի վրա նախանշված 9 վտանգավոր կետերում, Մ-2, Մ-4, Մ-12 և Մ-17 միջպետական ճանապարհների վրա նախանշված 15 վտանգավոր կետերում, ինչպես նաև՝ լրացուցիչ բացահայտված այլ վտանգավոր կետերում:
- Ծրագիրը մեկնարկել է 04.12.2019թ., ավարտը նախատեսված է 15.12.2022թ.:
- Հ-8 և Մ-5 ճանապարհների 9 վտանգավոր կետերի շինարարական աշխատանքներն ավարտվել են 2021 թվականին: Մ-6 ճանապարհի վրա տեղադրվել են ճանապարհային անվտանգության իրազեկման երկու վահանակներ:
- 2022 թվականին ավարտվել են նաև Մ-2 և Մ-4 միջպետական նշանակության ճանապարհների 9 վթարավտանգ կետերի վերացման աշխատանքները:
- Այլ վտանգավոր կետերի վերացման ուղղությամբ աշխատանքները գտնվում են իրականացման, նախագծման կամ նախամրցութային փուլերում:
- Ծրագրի շրջանակում իրականացվել է նաև ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթաց: ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացման վերաբերյալ 2021թ. կազմակերպվել է աշխատաժողով: